

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԼԻՈՆԱԲՆԱԿ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱՊՈԼԵՈՆ ՊՈՒԼԼՈՒՔՅԱՆԻՆ՝ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ ՇՔԱՆՇԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՌԹԻՎ

**Լիոն**

Մեր սրտագին ու ջերմ շնորհավորանքները բարձր պարգևի առթիվ, որին արժանացաք։

Պատվո Լեգեոնի շքանշանը, որ Ձեզ շնորհվեց ֆրանսիական վեհանձն կառավարության կողմից, մեծ պատիվ է՝ ընծայված Ձեզ, այնպես էլ հայ ժողովրդին։

Մայր Աթոռ ս. Էջմիածնից հղում ենք Մեր օրհնությունը փառապանծ Ֆրանսիային և նրա հանճարին։

Մեր հայրապետական օրհնությունը Ձեզ և Ձեր ազնիվ տիկնոջը։

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

31-ը հունվարի 1972 թ.,
Ս. Էջմիածին